Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
պարոն Արկադի Խաչատրյանին

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**Միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ Կարեն Հովհաննիսյանի և ջրային քաղաքականության վարչության մասնագետ Նելլի Բաբայանի 2023 թվականի օգստոսի 28-ից սեպտեմբերի 21-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ**

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

Կարեն Հովհաննիսյան
Նելլի Բաբայան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ**

Միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ
Ջրային քաղաքականության վարչության մասնագետ

3. **ԳՈՐԾՈՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Հանջու),
2023 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 21-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գյուղական էլեկտրականության ազգային հետազոտական ինստիտուտ- Հանջու տարածաշրջանային կենտրոն (HRC)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Կանաչ և շրջանաձև տնտեսություն և կայուն զարգացում» խորագրով դասընթացին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

2023 թվականի օգոստոսի 30-ից սեպտեմբերի 19-ը կայացած «Կանաչ և շրջանաձև տնտեսություն և կայուն զարգացում» խորագրով դասընթացի շրջանակներում քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մասին պատմական ընդհանուր ակնարկ
- Աղքատության նպատակային հաղթահարման չինական փորձը
- Կանաչ զարգացման և Հարավ-Հարավ համագործակցության մոդելը Չինաստանում

- Ցածր ածխածնի և ածխածնային չեզոքացման գործողությունները Չինաստանում
- Չինաստանի կանաչ տնտեսությունը և կանաչ կայուն զարգացման փորձը Չժեցյան գավառում
- Էկոլոգիական գավառի կառուցումը՝ Չժեցյան գավառի փորձով
- Փոքր հիդրոէներգետիկ համակարգը և էլեկտրաֆիկացումը Չինաստանում
- Անջիի գյուղական կանաչ միջավայրի ստեղծումը
- Վերականգնվող էներգիայի կիրառումը գյուղական վայրերում
- Կանաչ փոքր հիդրոէներգիայի զարգացումը Չինաստանում

Դասընթացին մասնակցում էին 36 ներկայացուցիչ 13 երկրից (Հայաստան, Կոստա Ռիկա, Չեխիա, Հորդանան, Մարոկկո, Պակիստան, Պերու, Տրինիդադ և Տոբագո, Վենեսուելա, Ուզբեկստան, Տաջիկստան, Նեպալ)։

Դասընթացի երկրորդ մասը անցկացվեց մայրաքաղաք Պեկինում, որտեղ սեպտեմբերի 11-15-ը տեղի ունեցավ 18-րդ ջրի համաշխարհային կոնգրեսը (XVII WWC)։ Ջրի համաշխարհային կոնգրեսը աշխարհի խոշորագույն կոնգրեսներից մեկն է, որը մեկ հարթակի շուրջ է համախմբում ջրային քաղաքականություն մշակողներին, հետազոտողներին և քաղաքականությունը կիրառողներին։ 1973 թվականից ի վեր Ջրային ռեսուրսների միջազգային ասոցիացիան (IWRA) երեք տարին մեկ անցկացնում է Ջրի համաշխարհային կոնգրես աշխարհի տարբեր վայրերում։ Կոնգրեսի ընթացքում միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, փորձագետներ, գիտնականներ, ձեռնարկատերեր և տնտեսագետներ ամբողջ աշխարհից կիսվում են իրենց գիտելիքներով և փորձով ջրին առնչվող հարցերի լայն շրջանակի վերաբերյալ։

18-րդ կոնգրեսի խորագիրն էր «Ջուր բոլորի համար. ներդաշնակություն մարդկանց և բնության միջև»։ Կոնգրեսի նպատակն էր խթանել մարդկանց և բնության միջև ջրի կարիքների համակարգումը և հավասարակշռությունը։ Կոնգրեսը նպաստեց գիտելիքների և փորձի փոխանակմանը՝ կենտրոնանալով ջրի, մարդու և բնության միջև փոխհարաբերությունների, ջրի հետ կապված բոլոր գործոնները համակարգված կերպով բացահայտելու և համադրելու, ինչպես նաև համակարգված մոտեցումների կիրառմամբ ջրի կառավարման ռազմավարությունների և քաղաքականության մշակման և իրականացման վրա։

18-րդ Ջրի համաշխարհային կոնգրեսի նպատակն էր ջրային քաղաքականության ոլորտում ստեղծել հարթակ փորձի փոխանակման, քննարկումների խթանման և նոր գիտելիքների, հետազոտությունների արդյունքների և նոր զարգացումների ներկայացման համար ամբողջ աշխարհում։

Կոնգրեսի ընթացքում տեղի ունեցան մի շարք պանելային և հատուկ քննարկումներ, որոնց իրենց մասնակցությունը բերեցին նաև դասընթացի մասնակիցները։

Դասընթացի ընթացքում կազմակերպվեցին մի շարք մասնագիտական այցելություններ, որոնց ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու կանաչ և շրջանաձև տնտեսության ոլորտում չինական առաջադեմ փորձին։

- Այցելություն Հանջոուի Ցածր ածխածնային գիտական և տեխնոլոգիական թանգարան
- Այցելություն Հանջոուի «Ջիուֆենգ թափոնից էներգիա» գործարան
- Այցելություն Չժեցյան գավառի բամբուկի և փայտի վերամշակման գործարան
- Այցելություն Յուկուն գյուղ («Կանաչ գյուղ»-ի մոդել Չինաստանում)
- Այցելություն Չինաստանի ջրի ազգային թանգարան

7. **<u>ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Երեքշաբաթյա դասընթացը հնարավորություն տվեց ծանոթանալու Չինաստանի կանաչ զարգացման հայեցակարգերին, կանաչ, ցածրածխածնային և շրջանաձև տնտեսության զարգացման պրակտիկ գիտելիքներին, մաքուր և վերականգնվող էներգիայի զարգացման և կիրառման փորձին:

Դասընթացի ընթացքում կարևորվեց զարգացող երկրների միջև փորձի փոխանակման և համագործակցության հնարավորությունները:

Դասընթացը դարձավ արդյունավետ հարթակ գիտելիքների փոխանակման և նոր գիտելիքների ձեռքբերման համար ինչպես Չինաստանի առաջադեմ փորձի, այնպես էլ զարգացող երկրների հետ:

Դասընթացի ավարտին Հայաստանի ներկայացուցիչների կողմից պատրաստվեց և ներկայացվեց Հայաստանի Հանրապետության մասին զեկույց, որում ընդգրկված էին երկրի վերաբերյալ ընդհանուր ակնարկ, կանաչ և շրջանաձև տնտեսության և կայուն զարգացման վերաբերյալ դրույթներ, երկրի էներգետիկ ընդհանուր վիճակը, խնդիրներն ու խոչընդոտները, որոնց առնչվում է Հայաստանը կանաչ և կայուն տնտեսության զարգացման համար:

Բացի երկրի զեկույցից յուրաքանչյուր մասնակից ներկայացրեց նաև դասընթացի վերաբերյալ անհատական զեկույց, որում ամփոփված էին անձնական ձեռքբերումները սեմինարին մասնակցելուց հետո, դասընթացից ստացված օգուտներն ապագայում աշխատանքի ընթացքում կիրառելու հնարավորությունը և այլն:

Միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ — Կարեն Հովհաննիսյան

Ջրային քաղաքականության վարչության մասնագետ — Նելլի Բաբայան

26.09.2023թ.